



### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Պրոֆ. Զ. Աճառյանը Մերոպ Մաշտոցի կենսագրության մեջ («Էջմիածին», 1956 թ., N II, էջ 29), Կորյունի հետևյալ հատվածի մասին՝ «Յետ այնորիկ անույր հաւանութիւն երանելիին Մաշտոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի Կալենականսն, և նա ի սփիւոս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն», ասում է. «Կորյունի այս խոսքը մոռն է և չի հասկացվում, թե ո՞վ է «Տէր եպիսկոպոսը» և ի՞նչ բան է Կալենականքը»: Եվ հետո թեր ուզեմ ենթագրություններ անելով «Տէր» անվան մասին, հանդում է այն եզրակացություն, որին, իրանից առաջ, հետազոտող բանասերներն էին հանգել, այսինքն՝ «Տէր»-ը ոչ թե հասուկ, այլ հասարակ անուն պետք է ընդունել և թե «Տէր եպիսկոպոսն» ոչ այլ ոք է, եթե ոչ Սահակ Պարթև հայրապետը:

«Մնում է իմանալ, թե ի՞նչ է Կալենականքը», — շարունակում է մեծանուն գիտնականը և մեջ է բերում Ստ. Նազարյանից սկսած մեր համրավավոր բանասերների կարծիքը և գալիս է այն եզրակացության, թե Կալենական գավառ չկա Հայաստանում: Մինչդեռ համրավավոր և բազմաշխատ գիտնականը,

եթե շատ էլ հավատ չընծայեր իր նախորդների հետազոտություններին և ինքը պարտեր մեր մատենագիրներն, անշուշտ կզաներ. և Հայր Թորոսյանն էլ, որ «շատ է որոնել Կալենական անունով մի գավառ, բայց չի գտել» («Քաղմավէպ», 1913 թ., էջ 467), եթե մի փոքր էլ առաջ տաներ իր որոնումներն, անտարակույս նա էլ կգտներ:

Տողերիս գրողը ոչ մի պրպտում չի կատարել, բայց կարդալով «Էջմիածին» ամսագրի նույն համարի մեջ Մխիթար Գոշի մասին հոդվածը (էջ 40), պատահեցի հետևյալին. «Բայց տաճիկները նեղում են Մխիթարին Աղվանից կաթողիկոսի թելադրանքով, ուստի նա հեռանում է Խաչեն գավառի Հաթերքը, սակայն լսելով Քուրթ իշխանի վերադարձի մասին, Մխիթարը Հաթերքից հեռանում է և բնակվում Քուրթ իշխանի կալվածում, Կալեն գավառի Գետիկ վանքում, Աղստև գետի վրա»: Ուրեմն Կալեն անունով գավառ եղել է, տեղն էլ դժվար չի լինի որոշել, բայց գրադուտը մեզ չենք վերագրում, այլ Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Առաքել Առաքելյանին:

Օրջոնիկիձ

ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ԲԱՆԱՆԱ ԹԱՎԱՐԹԵԿՅԱՆ

